ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հունիսի 30 թիվ 245 -Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՁԱՐԻՆՋԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՇՈՂԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 160-րդ հոդվածով, 162-րդ հոդվածի 1-ին մասով և 164-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 60-րդ կետով և հիմք ընդունելով Շ.Ստեփանյանի 2026 թվականի հունիսի 29-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ձարինջայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Շողիկ Ստեփանյանին տրամադրել ամենամյա արձակուրդ 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ 2026 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 4-ը ներառյալ:

2. Շողիկ Ստեփանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ձարինջայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գոհար Դավթյանի վրա:

3. Շողիկ Ստեփանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 5-ից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Անդրադարձ
ՄԻԼԱԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6914980608

X

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հունիսի թ. Աշտարակ